

**ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՈՐՊԵՍ  
ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Հայաստանի Հանրապետությունը, 2002 թվականի մարտի 20-ին վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված եվրոպական կոնվենցիան<sup>2</sup>, ստանձնեց ներպետական օրենսդրությունը Եվրոպական կոնվենցիայի և կից արձանագրությունների պահանջներին համապատասխանեցնելու պարտավորություն: Անհրաժեշտ էր սահմանել գործերի քննության միջազգային չափանիշներին համապատասխանող կառուցակարգեր, որոնք կապահովվեին դատական պաշտպանության, արդար դատաքննության արդյունավետ միջոցներով իրավունքի պաշտպանություն ստանալու սահմանադրական և միջազգային-իրավական հանրաճանաչ իրավունքների իրականացումը, կնպաստեին քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Որպես այդպիսի կառուցակարգ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում նորովի կանոնակարգվեց գործը դատաքննության նախապատրաստելու փուլը:

Անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի և արդար դատաքննության իրավունքի հարաբերակցության խնդրին, պետք է նշել, որ վերջինս օրգանական և ֆունկցիոնալ տարրերի միասնությունն է: Խնդիր չունենալով վերլուծել այդ տարրերը հարկ ենք համարում անդրադառնալ միայն նրանց, որոնց ապահովման իրավական երաշխիքներից է գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը.

- ողջամիտ ժամկետներում գործի քննության պահանջը բխում

---

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Վ. Հովհաննիսյան:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի բովանդակությունից:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը ենթադրում է օպտիմալ հավասարակշռություն դատավարության ընթացքի և դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության միջև:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս նշել է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ: «Ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից<sup>3</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր DH (97) հանձնարարականում, որն ընդունվել է Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավունքի գերակայության համար»<sup>4</sup>: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցած ձգձգումներով: Ընդ որում, պատասխանող Կառավարությունը չի կարող քաղաքացիական և քրեական գործերի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու իր պարտավորությունից շեղումը պատճառաբանել ներպետական դատարանների ծանրաբեռնվածությամբ: Եվրո-

---

<sup>3</sup> См. у Моул Н., Харби К., Алексеева Л.Б., Европейская-Конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6. Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии. - М.: Российская академия правосудия, 2001, էջեր 38-40:

<sup>4</sup> См. у Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը/ գիտ. խմբ. Գ. Գ. Հարությունյան: Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 212:

պական դատարանը բազմիցս մերժել է պատասխանող կառավարությունների նման պատճառաբանությունը՝ ընդգծելով, որ Եվրոպական կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ դատարանները կարողանան ապահովել 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, ներառյալ «ողջամիտ ժամկետի» պահանջը<sup>5</sup>:

Եվրոպական դատարանը մշակել է նաև այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամկետների ողջամտությունը գնահատելիս: Այդպիսիք ենք՝

- գործի բարդությունը,
- Եվրոպական դատարան դիմած անձի, ինչպես նաև պետաիշխանական մարմինների վարքագիծը, որոնց պատճառով ձգձգվել է գործի քննությունը,
- դիմողի համար դատաքննության առարկա հանդիսացող արժեքի կարևորությունը<sup>6</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը ևս մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից<sup>7</sup>:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, որպես արդար դատաքննության իրավունքի օրգանական տարր, ՀՀ օրենսդրական համակարգ ներմուծվեց 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Մեկ տարի անց ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 13.06.2006 թվականի թիվ 98 որոշմամբ<sup>8</sup> արձանագրեց, որ մեր երկրում կան որոշ խնդիրներ գործերի քննության ողջամիտ ժամկետնե-

---

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Վորմաչևան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2004 թվականի հունվարի 29-ի վճիռը, կետ 54:

<sup>6</sup> Տե՛ս *Մոյլ Н., Харбу К., Алексеева Л. Б.*, նույն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-814(ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀԳՏ 2006.07.03/17(226):

րի հետ կապված՝ ինչպես դատական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրության կատարելագործման տեսանկյունից: Միաժամանակ նշեց, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Քաղաքացիական գործերով, մասնավորապես, գործի քննությունը պետք է ավարտվի մեկ դատական նիստի ընթացքում, եթե չկան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերը՝ գործի քննությունը հետաձգելու համար:

Որպես այս պահանջի ապահովման իրավական երաշխիք 2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգիրքը<sup>9</sup> սահմանեց, որ դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով (հոդվ. 16, մաս 3), իսկ գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում (հոդվ. 16, մաս 4): Նմանատիպ դատավարական նորմեր ամրագրվեցին նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 2007 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, ՔԴՕ 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատարանում պետք է քննվի և վճիռ կայացվի ողջամիտ ժամկետում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատաքննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով: Ողջամիտ ժամկետում բողոքը քննելու և որոշում կայացնելու պահանջ նախատեսված է նաև դատական ակտերի վերանայման փուլերում:

Մեր կարծիքով, թե՛ ՀՀ դատական օրենսգիրքը, և թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, մեխանիկորեն ամրագրելով ողջամիտ ժամկետներում գործի քննության պահանջը, դրա ապահովման բավարար երաշխիքներ չեն նախատեսել:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՀՀ դատական օրենսգիրքը, թեև անուղղակիորեն, սակայն որպես ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման կառուցակարգ դիտում է գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը՝ սահմանելով, որ դատարանում գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով կողմերի մասնակցությամբ, որպես կանոն, իրականացվում է գործի դատական քննության նախապատրաստական փուլ

---

<sup>9</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ. 489:

(հողվ. 16, մաս 1-ին): Գործի արդյունավետ քննությունը բնորոշվում է մի շարք չափանիշներով, որոնցից է նաև ողջամիտ ժամկետներում գործերի քննության պահանջը, հետևաբար գործի դատաքննության նախապատրաստումը, որպես գործի արդյունավետ քննության ապահովմանն ուղղված կառուցակարգ, կոչված է երաշխավորելու նաև նշված պահանջի ապահովումը:

Հաշվի առնելով դատավարության այս փուլի նպատակը, խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունների շրջանակը (դատավարության այս փուլում դատարանը պարզելով գործին մասնակցող անձանց շրջանակը, վերջիններիս ծանուցելով գործի քննության վայրի և ժամանակի մասին, ապահովելով դատավարական փաստաթղթերի փոխանակումը, քննարկելով և լուծելով գործին մասնակցող անձանց միջնորդությունները, իրականացնելով այլ դատավարական գործողություններ որոշակի նախադրյալներ է ստեղծում գործի դատաքննությունը հնարավորինս սեղմ ժամկետում ավարտելու համար: Կամ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կանոնների ճիշտ կիրառումն ապահովում է օրինական և հիմնավորված դատական ակտի կայացումը՝ երաշխավորելով վերջինիս կայունությունը դատական ակտերի վերանայման փուլերում, ինչը ևս կարևոր նշանակություն ունի ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի ապահովման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ գնահատվում է գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը, ներառյալ նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում կարող ենք հիմնավոր համարել օրենսդրի մոտեցումը, սակայն գտնում ենք, որ այն բավարար երաշխիք չէ՝ նկատի ունենալով, որ գործի դատաքննության նախապատրաստությունը, համաձայն ՀՀ դատական օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ևս պետք է իրականացվի *ողջամիտ ժամկետներում*:

Մեր կարծիքով՝ գործի քննության ժամկետի ողջամտությունն ապահովելու համար քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլի, այդ թվում՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի համար պետք է ժամանակային սահմանափակում նախատե-

սել, ինչպես նաև սահմանել տվյալ ժամկետը երկարաձգելու կարգ<sup>10</sup>: Առաջարկում ենք ՔԴՕ-ում նախատեսել դրույթ այն մասին, որ գործի նախապատրաստումը դատաքննության իրականացվում է գործը հարուցելու օրվանից մինչև երկամսյա ժամկետում՝ միաժամանակ գործի բարդությամբ պայմանավորված սահմանելով այդ ժամկետի երկարաձգման կարգ՝ առավելագույնը մինչև չորս ամսով: Առաջարկվող մինչև երկամսյա ժամկետը յուրաքանչյուր գործով այն առավելագույն ժամանակահատվածն է, որի շրջանակներում պետք է իրականացվեն գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված պարտադիր գործողությունները (հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելը, հայցադիմումի պատասխան ներկայացնելը և այլ գործողություններ), ինչպես նաև՝ նախնական դատական նիստի հրավիրումը և անցկացումը, իսկ այդ ժամկետի երկարաձգումը, գործի հանգամանքներից ելնելով, կարող է պայմանավորված լինել, գործի վարույթին նոր անձ ներգրավելու հանգամանքով, դատական հանձնարարություններով կամ այլ դատավարական գործողությունների կատարմամբ:

Գտնում ենք, որ պետք է նախատեսել նաև նախնական դատական նիստ հրավիրելու և այն անցկացնելու հստակ ժամկետներ՝ սահմանելով, որ նախնական դատական նիստ հրավիրելու հարցը դատարանը լուծում է պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ նախնական դատական նիստը պետք է անցկացվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երկշաբաթյա ժամկետում:

- Օրինական և հիմնավորված դատական ակտ ստանալու իրավունքը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ենթադրում է դատական ակտը պատճառաբանելու և հիմնավորելու, ինչպես նաև բացառապես օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կայացնելու պարտականությունը<sup>11</sup>:

---

<sup>10</sup> Համեմատության համար նշենք, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ժամանակային սահմանափակում նախատեսված է Ղազախստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքում (հոդված 167):

<sup>11</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Վան դե Հուրկն ընդդեմ Նիդեռլանդների* գործով 1994 թվականի ապրիլի 19-ի վճիռը, կետ 61.2:

Օրինականությունը և հիմնավորվածությունը դատական ակտերին, այդ թվում նաև՝ դատարանի վճռին ներկայացվող հիմնական պահանջներն են, որոնց ապահովման երաշխիքները սկիզբ են դրվում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Այսպես, վճռի կայացման օրինականությունն ապահովելու համար դատարանը պարտավոր է ոչ միայն ճիշտ որոշել վիճելի նյութական իրավահարաբերության բնույթը, այլև տալ դրա իրավաբանական որակումը, ընտրել կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերը, ստուգել դրանց իրավաբանական ուժը, ճիշտ մեկնաբանել իրավական ակտի իմաստը և բովանդակությունը:

Վերը թվարկված գործողություններն իրենց նախնական դրսևորումները ստանում են գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: ՔԴՕ 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը: Եթե դատարանը ճիշտ չի պարզում վիճելի իրավահարաբերության բնույթը, սխալ կորոշի նաև կիրառման ենթակա օրենքներն ու այլ իրավական ակտերը: Սակայն վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը և կիրառման ենթակա օրենսդրությունը ճիշտ որոշելը բավարար չէ վճռի իրավականության համար, այլ անհրաժեշտ է նաև, որ դատարանը ճիշտ մեկնաբանի նաև իրավական նորմերը: Իրավական նորմի սխալ մեկնաբանությունն առկա է այն դեպքում, երբ դատարանը, ճիշտ որակելով կողմերի իրավահարաբերությունը, սխալ է պարզաբանել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի բովանդակությունը, վերջինիս վերլուծության արդյունքում ըստ էության սխալ հետևություններ է արել կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ<sup>12</sup>: Ուստի հարկ ենք համարում քննարկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերի մեկնաբանման անհրաժեշտության հարցը: Մեր կարծիքով, քաղաքացիական դատավարության այս փուլում նման անհրաժեշտություն կարող է ռաջանալ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելիս, քանի որ ապացուցման առար-

---

<sup>12</sup> Տե՛ս *Մեղրյան Ս. Գ.*, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 83:

կան կազմավորվում է ոչ միայն հայցի հիմքի և դրա դեմ արվող առարկությունների հիմքի փաստերից, այլ նաև՝ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի (նորմերի) հիպոթեզով և դիսպոզիցիայով նախատեսված փաստերից: Հետևաբար, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ապացուցման առարկան որոշելիս դատարանը պետք է բացահայտի նաև կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերի բովանդակությունը:

Դրանով կարող ենք փաստել որքանով ճիշտ է դատարանը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում որակել վիճելի իրավահարաբերությունը, ընտրել կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերը, ճիշտ մեկնաբանել դրանց իմաստը և բովանդակությունը, այնքանով երաշխավորված է օրինական վճռի կայացումը:

Դատական ակտին ներկայացվող պահանջների ուսումնասիրության շրջանակներում Ռ. Գ. Պետրոսյանը նշել է, որ օրինականությունն ու հիմնավորվածությունն անխզելիորեն փոխկապակցված հասկացություններ են, բայց չեն նույնանում<sup>13</sup>: Դատական ակտը կարող է հիմնավորված լինել փաստերով և ապացույցներով, բայց անօրինական լինել դատավարական նորմերի խախտումների պատճառով: Ուստի, յուրաքանչյուր չհիմնավորված դատական ակտ անօրինական է, բայց ոչ բոլոր հիմնավորված դատական ակտերն են օրինական:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում անդրադառնալով վճռի հիմնավորվածության հարցին, նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե փաստական, և թե իրավական հիմնավորումը: Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է

---

<sup>13</sup> Տե՛ս *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն /Ռ. Գ. Պետրոսյան/; (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ. Զ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Եր.: Ոսկան Երևանցի, 2012, էջ 407:



կիրառվի հենց այդ նորմը<sup>14</sup>:

Հիմնավորված վճիռ ստանալու նախապայմաններից է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը ճիշտ որոշել, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դրսևորվում է նախնական դատական նիստում հայցի առարկան և հիմքը պարզելով, ինչպես նաև կողմերի հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելով (ՔԴՕ 149<sup>8</sup> հոդված, 2-րդ մաս, 1-ին և 5-րդ կետեր):

Դատարանի վճիռը հիմնավորված է, եթե դատարանը վճռում նշել և գնահատել է ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները: ՔԴՕ 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանն ապացույցները վերջնականորեն գնահատում է վճիռ կայացնելիս, ինչը չի նշանակում, որ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը դատարանը զերծ է ապացույցները գնահատելու գործընթացից: Ապացույցների գնահատումը կատարվում է նաև դրանց ստացման և ձեռք բերման ընթացքում, հետևաբար նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Այսպես, ՔԴՕ 149<sup>8</sup> հոդվածի 2-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու հարցը և այլն:

Հիմնավորված վճռի կայացումը ենթադրում է նաև այն նորմի մատնանշում, որով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս, իսկ այդ նորմի նախնական ընտրությունը, ինչպես արդեն նշվեց, կատարվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

- Կողմերի հավասարության պայմաններում գործի քննության իրավունքը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում մեկնաբանվել է կողմերի արդար հավասարակշռության իմաստով և սահմանվել է, որ յուրաքանչյուր կողմին պետք է ողջամիտ հնարավոր

---

<sup>14</sup> Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-35(ՎԴ)/2008 քաղաքացիական գործով 2008 թվականի փետրվարի 1-ի որոշումը:

րություն ընձեռնել ներկայացնել իր դիրքորոշումն այնպիսի պայմաններում, որոնք վերջինիս հակադիր կողմի նկատմամբ չեն դնի էապես ոչ շահեկան պայմաններում<sup>15</sup>: Եվրոպական դատարանը կողմերի հավասարության սկզբունքի բովանդակությունից բխեցրել է սեփական դիրքորոշումը և դրանք հիմնավորող ապացույցները ներկայացնելու հնարավորության հավասարությունը, ինչն անխզելիորեն կապվում է քաղաքացիական դատավարության մրցակցության սկզբունքի լիարժեք իրացման հետ: Եվրոպական դատարանը պարզաբանել է, որ մրցակցության սկզբունքը «դատաքննության հիմնական երաշխիքներից մեկն է»<sup>16</sup>, սահմանելով նաև արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող մրցակցության պայմաններում գործի քննության իրավունքի բովանդակության ընդհանուր գծերը: Այսպես, Եվրոպական դատարանի վճռի համաձայն՝ մրցակցային դատավարության իրավունքը «ենթադրում է քրեական կամ քաղաքացիական վարույթում կողմերի հնարավորությունը ծանոթանալ գործին կցված բոլոր ապացույցներին ու դիտողություններին և մեկնաբանել դրանք»<sup>17</sup>: Ըստ Եվրոպական դատարանի՝ արդար դատաքննության իրավունքը միաժամանակ ենթադրում է դատաքննության մրցակցային բնույթ, ինչը ենթադրում է կողմերի հնարավորությունը ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում տեղեկացված լինել սովյալ գործով ներկայացված բոլոր ապացույցների կամ առարկայացված դիտողությունների մասին և հնարավորություն ունենալ մեկնաբանել դրանք<sup>18</sup>:

Ինչպես հետևում է վերոգրյալից, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հավասարության պայմաններում գործի քննության և մրցակցային դատավարության պահանջները դիտարկվում են նույն համատեքստում: ՀՀ վճռաբեկ դատարանը ևս կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները դիտարկում է փոխկապակցվածության մեջ: Մասնավորապես, գործերից մեկով

---

<sup>15</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի *Վերներն ընդդեմ Ավստրիայի* գործով 1997 թվականի նոյեմբերի 24 վճիռը, կետ 63:

<sup>16</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի *Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի* գործով 1989 թվականի դեկտեմբերի 19 վճիռը, կետ 102:

<sup>17</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի *Մորելն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2000 թվականի հունիսի 6-ի վճիռը, կետ 27:

<sup>18</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի *Ռուիզ-Մաթեոսն ընդդեմ Իսպանիայի* գործով 1993 թվականի հունիսի 23-ի վճիռը, կետ 63:

կայացված որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահավասարության սկզբունքը սերտորեն կապված է մրցակցության սկզբունքի հետ և միայն դրա իրացման պայմաններում է հնարավոր ապահովել մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը: Քաղաքացիական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույց ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դի եականորեն նվազ բարենպաստ վիճակում (տես՝ Անկերլը ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշման 38-րդ կետ, Դոմբո Բեհեր Բ. Վ. ընդդեմ Նիդեռլանդների գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.10.1993 թվականի որոշման 33-րդ կետ)<sup>19</sup>:

ՔԴՕ 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Քաղաքացիական դատավարությունն ընդգրկում է նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլը, հետևաբար կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների գործողությունը հավասարապես տարածվում է նաև դատավարության այս փուլի վրա: Միննույն ժամանակ, գործը դատաքննության նախապատրաստելու փուլն այն իրավական կառուցակարգերից է, որն ապահովում է նշված սկզբունքների իրացումը:

Քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքը ենթադրում է, որ գործին մասնակցող անձինք պետք է տեղեկացված լինեն գործով ներկայացված բոլոր ապացույցների կամ առարկությունների մասին, լիարժեք հնարավորություն ունենան մասնակցել գործի քննությանը, ապացուցողական գործունեություն իրականացնեն և գործով ներկայացնեն իրենց դիրքորոշումը:

Այս առումով գործը դատաքննության նախապատրաստելու

---

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0874/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը:

փուլում բավարար և հավասար պայմաններ են ստեղծվել գործի նյութերին ծանոթանալու և դրանց վերաբերյալ սեփական դիրքորոշումը ներկայացնելու իրավունքի իրականացումն ապահովելու համար:

Այսպես, հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո իրականացվում են հետևյալ նախապատրաստական գործողությունները.

- դատարանը պատասխանողին ուղարկում է հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները (ՔԴՕ 93 հոդվ. 1-ին մաս);

- այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել, դատարանը պատասխանողին ծանուցում է, որ նշված փաստաթղթերը, դրանք ծանոթանալու նպատակով, դեպոնացված են դատարանում (ՔԴՕ 93 հոդվ. 2-րդ մաս);

- գործին մասնակցող անձանց նրանց դիմումով տրամադրվում են հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները (ՔԴՕ 93 հոդվ. 3-րդ մաս);

- դատարանը պատասխանողին նախազգուշացնում է հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և չներկայացնելու իրավական հետևանքների մասին (ՔԴՕ 93 հոդվ. 1-ին մաս);

- պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում պարտավոր է դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան (ՔԴՕ 95 հոդվ. 1-ին մաս);

- պատասխանողը պատասխանի հետ ներկայացնում է նաև իր տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե նա կրում է դրանց ապացուցման պարտականությունը, և եթե այդ ապացույցները հնարավոր է կցել պատասխանին (ՔԴՕ 95 հոդվ. 3-րդ մաս);

- պատասխանողը հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերն ուղարկում է հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց (ՔԴՕ 95 հոդվ. 3-րդ մաս):

Հետևում է, որ գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված վերոնշյալ գործողությունները հայցադիմումին և հայցադիմումի պատասխանին ծանոթանալու առնվազն նվազագույն պայմաններ ապահովում են:

Մրցակցային դատավարությունը ենթադրում է, որ ապացուցման պարտականությունը կրում են գործին մասնակցող անձինք: Դատարանն ապացուցման պարտականություն չի կրում, սակայն պատասխանատու է քաղաքացիական գործով վարույթի պատշաճ իրականացման, այդ թվում՝ ապացուցման գործընթացի կազմակերպման համար: Մրցակցային դատավարության պայմաններում դատարանը կարող է իրականացնել մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող որոշակի գործառույթներ: Մասնավորապես, ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ ՔԴՕ 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները:

Օրենքի իմացության և իրավագիտակցության ցածր մակարդակը շատ դեպքերում հնարավորություն չեն տալիս կողմերին՝ ինքնուրույն որոշել ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերը, հետևաբար և ներկայացնել անհրաժեշտ ապացույցները, ինչն էլ իր հերթին կարող է խոչընդոտել մրցակցության սկզբունքի իրացմանը: Մինչդեռ, դատարանը, պարզելով ապացուցման ենթակա փաստերը և սահմանելով, թե կողմերից յուրաքանչյուրն ապացուցման առարկայի մեջ մտնող որ փաստը (կամ փաստերը) պետք է հիմնավորի, նախադրյալներ է ստեղծում կողմերի մրցակցության համար, այլ կերպ ասած՝ կազմակերպում է նրանց մրցակցությունը:

Բացի այդ, ՔԴՕ 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Նկատի ունենալով, որ ընդհանուր կանոնի համաձայն ապացույցները պետք է բացահայտվեն մինչև դատաքննությունը (ՔԴՕ հոդվ. 48, մաս 4), հետևաբար՝ մրցակցությանն օժանդակող դատարանի այս գործողությունը ևս պետք է իրականացվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

*Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտն անհրաժեշտ կառուցակարգ է արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի իրացման մեխանիզմում, ինչպիսին են՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, օրինական և հիմնավորված դատական ակտ ստանալու իրավունքը, մրցակցային դատավարությունը և մասնակիցների իրավահավասարությունը:*

**Ашхен Карслян**  
*соискатель кафедры гражданского процесса ЕГУ*

## **ПОДГОТОВКА ДЕЛА К СУДЕБНОМУ РАЗБИРАТЕЛЬСТВУ КАК МЕХАНИЗМ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО**

Республика Армения, 20 октября 2002 года ратифицировав Европейскую конвенцию «О защите прав человека и основных свобод», подписанную 4 ноября 1950 года, приняла обязательство привести внутригосударственное законодательство в соответствие с требованиями Европейской конвенции и протоколов к ней. В частности, было необходимо установить соответствующие международным стандартам механизмы рассмотрения дел, которые обеспечат реализацию конституционных и общепризнанных прав на судебную защиту, справедливое судебное разбирательство, *эффективные средства* правовой защиты, способствуют повышению эффективности гражданского правосудия.

*В качестве такого механизма в результате внесения изменений и дополнений в Гражданский процессуальный кодекс РА по-новому была регламентирована стадия подготовки дела к судебному разбирательству.*

В статье автором рассмотрены роль и значение стадии подготовки дела к судебному разбирательству в механизме таких элементов права на справедливое судебное разбирательство, как право на судебное разбирательство в разумный срок, право на получение законного и обоснованного судебного акта, состязательность и равноправие сторон, представлены теоретические выводы, которые однозначно повысят практическое значение и эффективность института подготовки дела к судебному разбирательству.

**Ashkhen Gharslyan**

*Post graduate researcher at the YSU Chair of Civil Procedure*

### **THE PREPARATION STAGE OF A CASE FOR TRIAL AS A MECHANISM OF IMPLEMENTATION OF THE RIGHT TO FAIR TRIAL**

The Republic of Armenia, ratifying in 2002, March 20 the Convention on protection of human rights and fundamental freedoms of 1950 has assumed an obligation to ensure the conformity of the national legislation with the requirements of the Convention and its protocols. Particularly it was necessary to provide procedures of consideration of cases compatible with international standards, which will ensure the implementation of constitutional and international-legal rights to judicial protection, fair trial and effective remedies, will promote the effectiveness of civil justice.

As such procedure the amendments made to the Civil Procedural Code of the Republic of Armenia regulated the stage of preparation of a case for trial.

In the article the author has discussed the role and the importance of the preparation stage of a case for trial in the mechanism of implementation such elements of the right to fair trial, as the right to consideration of a case in reasonable time, rights to a reasoned judicial act, equality of arms and adversary proceedings. Theoretical conclusion have been made, which will raise the practical importance and efficiency of the institute of preparation of a case for trial.

**Բանալի բառեր՝** նախապատրաստել, նախնական դատական նիստ, փուլ, արարչություն, վարույթ, փաստ, իրավունք, հիմք, իրավակարգավորում, ողջամիտ ժամկետ:

**Ключевые слова:** *предварительное судебное заседание, этап, доказательство, производство, факт, право, основание, правовое регулирование, разумный срок.*

**Key words:** *to prepare, preliminary judicial session, stage, evidence, proceeding, fact, right, basis, legal regulation, reasonable time.*